## **Պատմություն սամուրայական խոհանոցի մասին. իրական սիրո պատմություն (2013)**
121 ր


(c)2013 “A Tale of Samurai Cooking” Film Partners

*Ռեժիսոր՝ Յուզո Ասահարա*
*Դերերում՝ Այա Ուետո, Կենգո Կորա, Կիմիկո Յո, Տոշիյուկի Նիշիդա*

Ֆունակի Դենայը Էդո ժամանակաշրջանում դրել է Կագա կլանի խոհանոցի հիմքերը՝ որպես սամուրայական խոհանոց, ովքեր պատրաստում էին ազնվականության համար: Այս հուզիչ դրաման պատկերում է Կագա կլանի ներքին գործերը կնոջ տեսանկյունից, ով ամուսնանում է Ֆունակիի որդու հետ: Այն ցուցադրում է կերակուրներ՝ պատրաստված Ֆունակի ընտանիքի «Ռյորի Մուգոնշո» բաղադրատոմսերի հավաքածուի համաձայն և վերարտադրում այդ ժամանակվա սամուրայի ընտանեկան առօրյան: Սպասուհի Յարուն տղանդավոր, բայց համառ խոհարար է, որի հետևանքով բաժանվում է ամուսնուց մեկ տարի անց: Սակայն, Կագա կլանի սամուրայական խոհանոցի Դեննայը (Նիշիդա Տոշիյուկին) խնդրում է նրան ամուսնանալ իր որդու և ժառանգորդ Յասունոբուի (Կորա Կենգո) հետ և աշխատում է լրացնել իր խոհարարական հմտությունների պակասը:

## **Մաէստրո (2015)**
129 ր


(c)2015「Maestro!」Film’s Partners/AKIRA SASO/FUTABASHA

*Ռեժիսոր՝ Շոտարո Կոբայաշի*
*Դերերում՝ Տորի Մացուզակա, Միվա, Տոշիյուկի Նիշիդա*

Կարո՞ղ են ճախողված նվագախմբի «բեկորները» և անհայտ խմբավարը վերակենդանացնել երաժշտությունը: Գաղտնիքն այդ «բարեփոխված» համերգի մեջ է: Կենտրոնական սիմֆոնիկ նվագախումբը՝ երբեմնի նշանավոր խումբ, որը սնանկացել է վեց ամիս առաջ,

պետք է վերամիավորվի, բայց իր փորձերի վայրը մի լքված գործարան է, իսկ երաժիշտները «մնացուկներ» են, ովքեր աշխատանք չեն գտել այլ վայրում: Երբ նրանք սկսում են նվագել, երաժշտության ձայնն ամեն ինչ է՝ բացի պրոֆեսիոնալից: Առեղծվածային խմբավար Տենդոն, երևում է, միավորել է նրանց: Ոչ ոք չգիտի, թե ով է նա, և նավարում է հյուսնի գործիքներով, ոչ թե դիրիժորական ձողիկով: Նրա հղկող ոճը չի գոհացնում երաժիշտներին, բայց աստիճանաբար նրանց ավելի է կլանում երաժշտության մեջ: Երիտասարդ կոնցերտմայստեր Կոսական, սակայն, իմանում է Տենդոյի անցյալի մասին, և խմբավարի ղեկավարությանը նրա դիմադրությունը ավելի ու ավելի է ուժեղանում: Միայն համերգի օրն է բացահայտվում Տենդոյի գաղտինքը...

**Երգը քո շուրթերին** (2015)
132 ր

*Ռեժիսոր՝ Տակահիրո Միկի*
*Դերերում՝ Յուի Արագակի, Ֆումինո Կիմուրա, Կենտա Կիրիտանի*


(c)2013 「Have a Song on Your Lips」 Film's Partners/

2008 Eiichi Nakata/ Shogakkan

Նակա-Գոտո միջնակարգ դպրոցը տեղակայված է Նագասակի պրեֆեկտուրայի կղզիներից մեկում: Յուրի Կաշիվագին երկար տարիներ անց առաջին անգամ վերադառնում է իր հայրենի քաղաք՝ փոխարինելու երաժշտության ուսուցչուհի տկն. Մացույամային, ով մեկնում է մայրության արձակուրդ: Աշակերտները խանդավառվում են, երբ լսում են, որ գեղեցիկ տկն. Կաշիվագին Տոկիոյում հայտնի դաշնակահար է եղել: Սակայն վերջինս չի ցանկանում նրանց համար դաշնամուր նվագել: Երբ տկն. Կաշիվագին դժկամությամբ ստանձնում է երգչախմբի խորհրդականի դերը, նա ընդունում է տղաների և որոշում մասնակցել ազգային երգչախմբի մրցույթին իբրև խառը երգչախումբ: Սա մեծ խառնաշփոթ է առաջացնում: Ողբերգական անցյալը թույլ չի տվել Յուրիին դաշնամուր նվագել, բայց նա աստիճանաբար ստանձնում է երգչախմբում իր դերը:

Սակայն մրցույթի օրը ցնցող միջադեպ է տեղի ունենում...

**Երաժշտախմբի ճագարն ու տղան (2013)**
97 ր


(c)"A Band Rabbit" and a Boy Film Partners

*Ռեժիսոր՝ Տակուջի Սուզուկի*
*Դերերում՝ Արատա Իուրա, Սավա Սուզուկի, Մասարու Միյազակի*

*Ձայնի բազմազույն կտորները միավորվում են՝ ստեղծելու երաժշտություն:*
*Բոլորն էլ մի օր ինչ-որ բանում կիրք են գտնում: Սա պատմություն է այդ անգին օրերի մասին:*

Կացուհիսա Օկուդան միջնակարգ դպրոցի ամաչկոտ աշակերտ է, ով սիրում է ամեն օր դասերի ավարտից անմիջապես հետո գնալ տուն: Մի օր նա հետևում է մի խորհրդավոր ճագարի ով նրան տանում է դպրոցի հոգևոր երաժշտախումբ: Դա դպրոցի ամենաերկար ժամերը պարապող ակումբն է, և նա ինչ-որ կերպ միանում է դրան: Որոշակիորեն հապաղելուց և անհանգստանալուց հետո, նա աստիճանաբար ընկղմվում է երաժշտության հրճվանքի մեջ: Հետո գալիս է համերգի օրը...

**Abraxas (2010)**
113 ր


(c)ABRAXAS partners

*Ռեժիսոր՝ Նաոկի Կատո*
*Դերերում՝ Սունեոհեա, Ռիե Տոմոսակա, Մանամի Յոնջո, Կաորու Կոբայաշի*

Ջոնենը ձեն վանական է, ով աշխատում է Ճապոնիայի հյուսիսարևելյան պրովինցիայի փոքր քաղաքներից մեկի «Ռյու-ուն-ջի» տաճարում: Անցյալում երազելով դառնալ ռոք երաժիշտ՝ նա սկսել է լսել իր ներքին ձայնը և տառապել կլինիկական ընկճախտից: Նա նույնիսկ փորձել է ինքնասպան լինել վանական դառնալուց հետո: Այդուհանդերձ, նա դեռ շարունակում է իրեն հարցնել.«Սա՞ է իմ կյանքը»: Երբ մի ավագ դպրոցում կարիերայի կողմնորոշման վերաբերյալ ճառի ժամանակ նա ուշագնաց է լինում, սկսում է հասկանալ, որ, ի վերջո, միայն երաժշտությունը կարող է փրկել իր կյանքը: Այժմ նա գիտակցում է կենդանի ռոք համերգով հանդես գալու իր մեծ ցանկությունը:

## THERMAE ROMAE (2012)

108 ր


(c)2012 "THERMAE ROMAE"Film Partners

*Ռեժիսոր՝ Տակեուչի Հիդեկի*
*Դերերում՝ Հիրոշի Աբե, Այա Ուետո, Կազուկի Կիտամուրա*

Ֆիլմը նկարահանվել է Յամազակի Մարիի հանրաճանաչ մանգայի հիման վրա, որն արժանացել է 2010թ. Մանգա Տաիշոին (Մուլտֆիլմերի Մեծ մրցանակ) և Տեզուկա Օսամու մշակութային մրցանակին (Լավագույն համառոտ աշխատանք) Լուցիուսը (Աբե)՝ Հռոմեական կայսրությունում սպա բաղնիքների ճարտարապետ, անսպասելիորեն ճանապարհորդում է ժամանակով և հայտնվում ժամանակակից ճապոնական բաղնիքում: Նա իր հետ Հռոմ է տանում այնտեղ սովորած ճապոնական մշակույթի տարրերը և մեծ հաջողության հասնում, ինչից հետո կայսրը նրան հրամայում է խոշոր սպա կառուցել:

## Մամեշիբա (2009)

106 ր


(c) 2009 “MAMESHIBA” PRODUCTION COMMITTEE

*Ռեժիսոր՝ Տորու Կամեի*
*Դերերում՝ Ջիրո Սատո, Յումի Ադաչի, Տեցու Վատանաբե*

Ֆիլմը հիմնված է հեռուստասերիալի վրա և պատկերում է միջին տարիքի տղամարդու ճանապարհորդությունը, ով երկու ամսական շնիկի հետ փնտրում է իր մորը, որը փախել է տնից: Մի օր Ջիրոն՝ 35-ամյա գործազուրկ տղամարդ, ով երբեք դուրս չի եկել իր քաղաքից, հանդիպում է Իչիրոյին՝ Մամեշիբայի ցեղատեսակի շան ձագ՝ վզին կարմիր շարֆ: Պարզվում է, որ Իչիրոյին ուղարկել է Ջիրոյի՝ փախուստի մեջ գտնվող մայրը, որպեսզի իր ընտանիքը գա և փնտրի իրեն: